

«ԱԶՔ» ԵՎ «ԳԼՈՒԽ» ԲԱՂԱԴՐՈՒՉՆԵՐՈՎ ԿԱՅՈՒՆ
ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐՈՒՄԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ

Հնադարյան մարդկային սովորությունն է խոսքն ուղեկցել զանազան շարժումներով և դիմաշարժությամբ, որոնք բազմաթիվ սերունդների կյանքում կրկնվելով և սովորական դառնալով, ընկալվել են իբրև մի տեսակ խորհրդանշաններ այս կամ այն գործողության կատարման կամ զգացմունքի, վիճակի, նույնիսկ մտքի արտահայտման: Սա սիմվոլիկայի յուրահատուկ դրսևորում է (Պ.Ս. Բեդիրյան, <<ժամանակակից հայերենի դարձվածաբանություն>>, Երևան, 1973) Այս կարգի դարձվածքներն առաջին հերթին կազմվում են մարմնի մասերի և նրանց կատարած զանազան գործողությունների անվանման միջոցով և կոչվում են սոմատիկ դարձվածքներ՝ *հոնքերը կիտել, աչքերը ոլորել, մատը կծել, գլուխ տալ, սիրտը առնել* և այլն:

Սոտավոր հաշվումներով գլուխ բառով կազմված են 650, աչքով 600, սիրտ բառով 400, ձեռ(ք)-ով 350, ոտ(ք)-ով՝ 336, բերանով 260, երես-ով՝ 180, լեզու-ով՝ 175, քիթ-ով՝ 158, ականջ-ով՝ 150 և այլն: Ինչո՞վ է բացատրվում այս երևույթը: Բանն այն է, որ պատկերավորության, արտահայտչականության համար մարդը գործածում է առավել մատչելի բառեր, իսկ այդպիսիք մարմնի մասերի անուններն են (Ա.Մ. Մուքիսյան <<ժամանակակից հայոց լեզու>>, 1999)

Այս կարգի դարձվածքների ուսումնասիրությունը խորացնում է մեր պատկերացումները լեզվի մասին որպես համակարգ, մեծ նշանակություն ունի ինչպես դարձվածաբանական տեսության այնպես էլ բառարանագրության և խոսքի կոլտուրայի զարգացման համար: Այժմ դիտարկենք, թե ինչպիսի օրինաչափություններ են դրսևորում այս կարգի դարձվածքները՝

Առաջին՝ դրանք, որպես կանոն, բայական կապակցություններ են:

Երկրորդ՝ խոսքի մեջ ավելի հաճախ համատեղում են ուղիղ և փոխաբերական իմաստները: Օր՝ *գլուխը բարձր պահած – a testa alta*
փակ աչքերով – con gli occhi chiusi

Այս միտքը, անշուշտ, չի վերաբերում այս կարգի սակավաթիվ այն դարձվածքներին, որոնց մեջ արդեն ամրապնդվել է փոխաբերական իմաստը, իսկ ուղեկցող գործողության իմաստը՝ մթազնվել՝

կուրծք ծեծել - battersi il petto

լեզուն կծել - mordersi la lingua

Երրորդ՝ այս կապակցությունների մի մասը, նայած խոսքային միջավայրին, տարբեր իմաստներ կարող են արտահայտել: Օր՝

ծեռքը սեղմել - stringere la mano

Զորորդ՝ խոսքային միջավայրում այս կարգի Դ-ները հաճախ ընդմիջարկվում են վիճակը, տրամադրությունը, զգացումը, վերաբերմունքը բացահայտող բառերով, որոնք կոնկրետացնում ու առավել որոշակի են դարձնում կապակցության իմաստը, օր՝

ուսերը բռնվել/վեր բաշել - stringersi nelle spalle / alzare le spalle

Հինգերորդ՝ այս կարգի բավական թվով Դ-ներ իրենց նույնակազմ զուգահեռներն ունեն այլ լեզուներում: Դժվար չէ բացատրել նման համընկնումը, եթե նկատի ունենանք, որ այդ կապակցությունների ցույց տված գործողությունները՝ շարժումներ, դիմաշարժություններ ..., հատուկ են եղել ոչ թե առանձին վերցրած մի որևէ հանրության, այլ առհասարակ մարդ արարածին: Որպես ապացույց դիտարկենք այն իմաստային ընդհանրություններն ու տարբերությունները, որ առկա են իտալերենի և հայերենի աչք և գլուխ բաղադրիչներով դարձվածքներում:

Ուսումնասիրելով գլուխ բաղադրիչով դարձվածքները տվյալ լեզուներում կարող ենք վեր հանել հետևյալ ընդհանրությունները՝

Գլուխ բաղադրիչով շատ դարձվածքներում առկա է "ՄԱՐԴ" սեման (Т.З. Черданцева, Москва, 1982)

testa dura, testa forte/secca/ di ferro/ di legno - պինդ / չոր գլուխ = համառ (մարդ)

testa d'asino/ di cavolo, di buie - էշի գլուխ, մեխի գլուխ, հիմարի գլուխ, դդում գլուխ = հիմար, անուղեղ (մարդ)

testa calda - տաք գլուխ = հանդուգն, խենթություն (մարդ) և այլն:

Սի շարք այլ դարձվածքներում առկա է "ՈՒՂԵՂ" կոնոտատիվ սեման՝ *fare di testa propria*- սեփական ուղեղով շարժվել

mettere in testa - գլուխը/ ուղեղը մտցնել

ribadire qc nella testa a qd - մեկի գլուխը/ ուղեղը մտցնել և այլն:

Այստեղից տեղի է ունենում իմաստի նեղացում և ի հայտ է գալիս "ՍԻՏՔ" սեման՝ *passare per la testa - մտքով անցնել*

salire alla testa - մտքին գալ

togliersi dalla testa, levarsi dalla testa - մտքից հանել/ գլխից հանել և այլն:

Որոշ դարձվածքներում էլ առկա է “ՂԵԿԱՎԱՐ” սեման, ինչպես օրինակ՝ *capo di famiglia* - ընտանիքի գլուխ

capo del governo, dello stato - պետության գլուխ, ղեկավար, նախագահ
essere a capo di qc, essere alla testa di qc - ինչ-որ բանի գլուխը, ղեկավարը, առաջնորդը լինել

con alla testa di qd - ինչ-որ մեկի գլխավորությամբ, ղեկավարությամբ
metteresi alla testa ecc. - մի բանի գլուխ կանգնել և այլն:

Բացի այդ երկու լեզուներում էլ տեղի է ունենում իմաստի նեղացում և առաջ է գալիս “պարագլուխ” սեման, որն անշուշտ բացասական երանգավորում է ստանում, ինչպես օրինակ՝ *capo/ testa della mafia* – մաֆիայի պարագլուխ:

Որոշ դարձվածքներում կարող ենք հանդիպել “ՉԱՆԴԻՄԱՆԵԼ” իմաստը՝
fare a qd la testa come un pallone - գլխին թուքումուր թափել, գլխին շան լափ թափել

lavare la testa a qd - գլուխը լվանալ

Երկու լեզուներն էլ արտահայտում են “*ցրվածություն*” իմաստը՝
avere la testa da un'altra parte, avere la testa fra le nuvole, non sapere dove si ha la testa, lasciare la testa a casa, andare con la testa in aria, avere la testa fuori del posto - ցրված լինել

Հայերեն համարժեքներն են՝ գլուխը խառը լինել, գլուխը չաշխատել, գլխին խելք չմնալ, գլուխը տեղում չլինել:

Մի շարք դարձածքներում էլ կարելի է հանդիպել “խաբել, համոզել” իմաստը

rivoltare la testa, empire la testa, far guastare la testa - գլուխը լցնել
scaldare la testa, fare a qd la testa come una campana – գլուխը հարթուկել, գլուխը յուղել, գլխի տակ փափուկ բարձ դնել, գլխին հեքիաթ կարդալ

Ինչպես նաև՝ “*ծանծրացնել*”, *Spezzare la testa* - գլուխը տանել

Բացի այդ կարող ենք հանդիպել նաև “երդվել” իմաստը՝
scommettere la testa, mettere la testa per scommessa - գլուխը գրավ դնել, գլխով երդվել, գլուխը տալ

farsi tagliare la testa - գլուխը կացնի տակ դնել

giocare la testa - գլխով երդվել, գլխով պատասխան տալ/ պատասխանատու լինել

Ինչպես նաև՝ *Չնազանդվել*՝

abbassare la testa, piegare la testa, curvare la testa – գլուխը
խոնարհել, գլուխ ծռել, գլուխը կախել

Սպանել՝ *fare la testa* – գլուխն ուտել, մեկի գլուխը թոցնել

Սահանալ՝ *lasciare la testa* – գլուխը դնել և այլն:

Ի տարբերություն հայերենի, իտալերենում “գլուխ” բաղադրիչը արտա-
հայտում է նաև հետևյալ իմաստները՝

Դիմադրություն՝ *tenere testa, fare testa* – դիմադրել

Կարող ենք հանդիպել նաև “դեմք, երես” սեման՝

gettare in testa, buttare in testa – երեսին չարտել

Իսկ հայերենն ի տարբերություն իտալերենի ի հայտ է բերում հետևյալ
իմաստները՝ Փորձանք, պատուհաս՝

գլխին թափվել, գլխին գալ, գլխին փորձանք դառնալ, գլխին խաթա
դառնալ, գլխին փորձանք բերել, անշառ գլուխը ցավի տակ դնել, անդարդ
գլուխը ավետարանի տակ դնել, գլխին սև ամպեր կուտակվել, գլխին գլխացա-
վանք դառնալ, գլխին խաղ խաղալ, գլխին կարկուտ բերել, գլխին կրակ թափ-
վել, գլխին հարսանիք գալ, գլխին պատուհաս / փորձանք դառնալ, գլխին
օյին բերել, գլխին սև բերել

Օթևան, ապաստան՝ գլուխը դնելու տեղ ունենալ / չունենալ

Ապստամբություն՝ գլուխ բարձրացնել

Անդրադառնալով ԱԶԶ բաղադրիչով դարձվածքներին կարող ենք վեր
հանել հետևյալ իմաստային ընդհանրությունները՝

1. Ուշադրություն, զգոնություն

avere un occhio alla gatta e uno alla padella – աչքերը ջուխտ անել,
աչքերը չորս անել

fuggire all'occhio, rapirsi dagli occhi, uscire dagli occhi – աչքից վրիպել
non battere gli occhi – աչք չթարթել

dormire con un occhio solo – մի աչքը միշտ արթուն լինել,

essere tutt'occhi e tutt'orecchi – աչք-ականջ դառնալ

2. Ուշադրություն զրավել՝

appagare l'occhio, soddisfare l'occhio, contentare l'occhio, attizzare l'occhio, – աչք ծակել, աչք շոյել, աչք շլացնել

balzare agli occhi, correre agli occhi, dare nell'occhio, chiamare l'occhio – աչքի գարնել, աչքի ընկնել

3. Տեսողություն՝

occhi cervieri, occhi lunghi, occhi di lince, occhi d'aquila, di falco –
սուր / լավ տեսողություն – սուր աչք

perdere la luce degli occhi, scurarsi gli occhi – տեսողությունը կորցնել
- *աչքերը բռնվել, աչքերի լույսը սպիտակել, աչքերը սև ջուր անցնել, աչքերը խավարել, աչքի լույսից զրկվել*

4. **Հայացք** *avere l'occhio addosso a qd* - աչքը, հայացքը չկտրել;
gettare l'occhio su, dare un occhio a qc - աչք գցել, հայացք գցել, հայացք նետել

accompagnare con l'occhio, seguire con l'occhio, voltare dietro coll'occhio աչքերով, հայացքով ուղեկցել

cercare coll'occhio, - աչքերով, հայացքով փնտրել
guardare sott'occhio - աչքի տակով, աչքի պոչով, աչքի ծայրով նայել

5. **Մարդ սիրելի/ատելի** *gli occhi del capo, la luce degli occhi, la papilla dell'occhio* -- աչքի լույս / շատ սիրելի ամծնավորություն
spina nell'occhio - աչքի փուշ, աչքի գրող

Այստեղից էլ ի հայտ են գալիս "սիրելի", "ատելի", "հարգել" "հարգանքից զրկվել" իմաստները, ինչպես օրինակ՝

amare piu che la luce degli occhi, essere piu caro degli occhi propri, importare quanto della luce degli occhi – աչքի լույսից էլ շատ սիրել

tenere come la papilla dell'occhio - աչքի լույսի պես պահել
essere a qd come un bruscio in un occhio, Essere come un pruno negli occhi - մեկի աչքի փուշը, աչքի գրողը լինել, աչքով աչք չունենալ մեկի հետ
cavare un occhio a qd - աչքը հանել

guardare di buon / mal occhio - լավ/ վատ աչքով նայել, քաղցր աչքով նայել, աչքը մեկի վրա քաղցր լինել

6. **Զարմանք** *con gli occhi fuori della testa, restare con tanto d'occhi, dilatare gli occhi, spalancare gli occhi, fare gli occhi grossi*

Հայերեն համարժեքներն են՝

աչքերը չոնել, աչքերը լայն բաց անել, աչքերը ճակատը թռչել, աչքերը դուրս պոծնել, աչքերը բաց մնալ, աչքերը պլշել

7. **խաբեություն, մոլորություն**

buttare / gettare la polvere negli occhi, dare/ gettare fumo negli occhi - աչքին թոզ փչել, աչքերը կապել, աչքերին հող ու մոխիր փչել

avere la benda sugli occhi o avere gli occhi foderati di prosciutto -- աչքերը կապված լինել, աչքերին քող/փառ ունենալ

velare gli occhi a qd - մեկի աչքերը կապել

aprire gli occhi alla verità – աչքերը բացվել, աչքերի փառը/ քողը ընկնել, աչքերից կապն ընկնել

8. արտասուք, լաց՝ *avere le lacrime agli occhi* - աչքերն արտասուքով լցվել

disciogliere gli occhi in lacrime – աչքերը թացանալ, աչքերը թրջվել
piangere a caldi occhi - աղի արցունք թափել

9. մահ՝ *chiudere gli occhi* - աչքերը փակել, աչքերը խփել

chiudere gli occhi alla luce - աչքերի լույսը մարել, աչքը աշխարհի վրա փակել

10. քուն՝ *chiudere gli occhi* - աչքերը փակել - քնել

velare l'occhio - Աչքերը զնալ, աչքերը ծանրանալ, - քունը տանել,

11. տանջանք, չարչարանք՝ *impegnarsi gli occhi* - աչքերը դուրս գալ
Հայերենում, ի տարբերություն իտալերենի, “աչք”-ը արտահայտում է նաև հետևյալ իմաստները՝

1. Կարոտ, սպասում՝ աչքը ջուր կտրել, աչքը ջուր դառնալ, աչքը ծամփին, աչքի մեջ մազ բուսնել, աչքը դռանը լինել, աչքերը ետևից մնալ, աչքերը մաշվել

2. Անեծք, բարեմադրություն, սնահավատություն՝

աչքս/ աչքդ/ աչքներս/ աչքներդ լույս- բարեմադրություն, որ ասվում է ուրախալի լուր հաղորդելիս կամ ուրախալի դեպքի առթիվ շնորհավորելիս, միևնույն ժամանակ դառնության և հեզմանքի արտահայտություն

աչքս/ աչքդ/ աչքներդ քոռանա/ կուրանա - անեծքի կամ վշտակցության, ափսոսանքի կամ ցավակցության արտահայտություն

աչքերը սառել - որևէ մարդու գալստյան նախագուշակություն է համարվում

աչքս/ աչքդ դուրս գա - անեծք, իսկ առաջին դեմքով՝ ափսոսանքի արտահայտություն

աչքով տալ, չար աչք, աչք առնել, չար աչքի դիպել

3. Մի բանի կարոտ, մի բանից զուրկ՝ *աչքը մի բանի վրա լինել, աչքը մեջը մնալ, մի բանի վրա աչք ունենալ*, աչքը կարոտ մնալ

և ընդհակառակը՝ *աչքը կուշտ* :

4. Բարկություն՝ *աչքերը արյունով լցվել*, աչքերը արյուն կոխել, աչքերից արյուն թափվել, աչքերից կայծակ թափվել, աչքերից կրակ թափվել, աչքերից

կայծեր դուրս թռչել, աչքերը կայծակին տալ, աչքերից կրակ ցայտել/
ծայթթել/դուրս գալ

Իսկ իտալերենում առկա են հետևյալ իմաստները՝

1. զգված, հոգնած լինել մի բանից՝ *fino agli occhi, averne fin sopra gli occhi, pieno fino gli occhi, averne pieni gli occhi*

2. տեսք՝

avere poco occhio - լավ տեսք չունենալ, վատ տեսք ունենալ

avere buon occhio - լավ տեսք ունենալ

perdere d'occhio - տեսքից ընկնել

3. գին, արժեք՝

pagare un occhio - շատ թանկ վճարել

costare un occhio della testa, valere un'occhio d'uomo - շատ թանկ
արժենալ և այլն:

Եվ այսպես՝ հիմք ընդունելով այս զուգադրական աշխատանքը՝ հան-
գում ենք հետևյալ եզրակացության, որ՝

ա. Մի շարք դարձվածքներ երկու լեզուներում էլ արտահայտության
եղանակով և զադափարով նույնն են: Այս խմբի դարձվածքները երկու
լեզուներում էլ գոյություն ունեն անկախաբար և արդյունք են շարահյուսական
ազատ կապակցությունների իմաստափոխության՝

Perdere la testa - գլուխը կորցնել

Chiudere gli occhi - աչքերը փակել

բ. Իտալերենում գոյություն ունեն զգալի թվով դարձվածքներ, որոնց
զադափարները հայերենում գոյություն չունեն, ուստի և այդ դարձվածքների
արտահայտության եղանակներն էլ խորթ են հայերեն լեզվամտածողության
համար: Նման դարձվածքների համար բավական է միայն իմաստների բա-
ցատրությունները տալ՝

Lasciare la testa a casa - բառացի՝ գլուխը տանը թողնել - ցրված լինել

Con la testa nel sacco - բառացի՝ գլուխը պարկի մեջ - գործել առանց
մտածելու, անմտածված քայլ կատարել

Avere poco occhio - բառացի՝ քիչ աչք ունենալ - վատ տեսք ունենալ

գ. Դարձվածքների մի զգալի մասի զադափարները երկու լեզվում էլ
գոյություն ունեն, սակայն այլ են արտահայտության եղանակները: Այսպիսի
դարձվածքները բացատրությունից բացի ունեն նաև իմաստով համարժեք
հայերեն դարձվածքներ՝

Montarsi la testa - քիթը ցցել

Gridare a testa - ողջ կոկորդով բղավել

Avere fin sopra gli occhi - մինչև կոկորդը կուշտ լինել

դ. Որոշ դարձվածքների գաղափարների հայերենում արտահայտվում են բարդ բառերով, որոնք և տրվում են դարձվածի բացատրության հետ մեկտեղ՝

Testa leggera – թեթևամիտ անձնավորություն

ե. Համարժեք դարձվածները հաճախ անհամապատասխան են լինում ոճական բնութագրությամբ: Պատահում է, որ դարձվածքը մեկ այլ լեզվում գործածվում է խոսքային մի միջավայրի համար, հայերենում՝ մի ուրիշ կարգի վերաբերմունք, մի լեզվում հանցած է, մյուսում՝ ոչ և այլն՝

Sbarrare l'occhio - աչքերը պլշել, չռել, տնկել: Իտալերեն դարձվածքն ունի չեզոք կիրառություն, մինչդեռ հայերեն տարբերակները պատկանում են ժողովրդական լեզվին, մասամբ նաև գոեհկաբանություններին:

Այսպիսով, ինչպես տեսանք հայերենն ու իտալերենը ցուցաբերում են իմաստային թե ընդհանրություններ, թե տարբերություններ, ընդ որում իմաստային դաշտերն ավելի հաճախ համընկնում են, քան տարբերվում, ինչը պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ, ինչպես վերը նշվեց, սոմատիկ դարձվածքների ցույց տված գործողությունները հատուկ են եղել ոչ թե առանձին վերցրած մի որևէ հանրության, այլ առհասարակ մարդ արարածին: Իսկ տարբերությունները պայմանավորված են տվյալ ժողովուրդների ազգային մտածելակերպով, հոգեկերտվածքով, ազգային բնավորությամբ ու հոգեբանությամբ, դարերից եկած սովորույթներով ու ավանդույթներով, տվյալ ազգի պատմությամբ, հավատալիքներով, կենցաղով և այլն:

Օգտագործած գրականության ցանկ

1. Հ.Զ. Պետրոսյան «Հայերենագիտական բառարան», Երևան, 1987
2. Խմբագրությամբ Ռ.Ա.Մելքոնյանի և Պ.Ս. Պողոսյանի «Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան» Երևան, 1975.
3. Հ.Զ. Պետրոսյան, Ս.Ա. Գալստյան, Թ.Ա. Ղարաբյուրյան, «Լեզվաբանական բառարան», Երևան, 1975
4. Ա.Ս. Սուքիասյան, Ս.Ա. Գալստյան «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան», Երևան, 1975
5. Պետրոս Բեդիրյան, «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» Երևան, 1973
6. Պետրոս Բեդիրյան, «Դարձվածաբանական բացատրական բառարան», Երևան, 1971
7. Ռ. Աղայան, Ն. Բարբուրյան «Ռուս – հայերեն դարձվածաբանական բառարան», Մակմիլան-Արմենիա, 2003
8. Խ. Բադիկյան « Ռուսմանական դարձվածաբանական բառարան », ԵՊՀ 2002
9. Գ. Օհանյան « Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան» Նեդիկակցի հրատ., 2007
10. Վ. Ա. Մահալյան « Դարձվածաբանական բառարան», Երևան, 2000

11. Ա.Հ. Նազարյան, Հ. Գ. Բաղդասարյան, «Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ», Երևան, 2000
12. Т.З. Черданцева, "Очерки по лексикологии итальянского языка" "Высшая школа", Москва, 1982
13. Т.З. Черданцева, "Язык и его образы", Москва, 1977
14. G. Zorko, B. Majzel, N. Skvorzova, Grande dizionario italiano-russo, Mosca, 2004
15. C. Lapucci, "Dizionario dei modi di dire della lingua italiana ", " Garzanti Editore", Milano, 1990
16. B.M. Quartu " Dizionario dei modi di dire della lingua italiana", Rizzoli- Collana, 1993
17. G. Pittano " Dizionario dei modi di dire" Zanichelli, 2009
18. P. Sorge " Dizionario dei modi di dire della lingua italiana" 2000
19. R. Schwamenthal, M. Straniero " Dizionario dei proverbi italiani" Rizzoli
20. Di Natale, Zacchei " In bocca al lupo! Espressioni idiomatiche e modi di dire tipici della lingua italiana, Guerra edizione, 2000
21. Garzanti " Grande dizionario italiano" 2009

The comparison between the idioms with the words "eye" and "head" in Armenian and Italian

This article is a theoretical-practical comparative analysis between the somatic idioms in Armenian and Italian, especially among the idioms with the words "eye" and "head". Somatic are considered to be the idioms composed of the names of the body parts. First we speak about the regularity of these idioms according to which they are, as a rule, verbal combinations, including both the direct and figurative senses and having different meanings in accordance with the context, etc.

Having observed the semantic similarities and the differences among the idioms with the words "eye" and "head" in the Armenian and Italian languages we notice that the senses often coincide more than differ. It is explained by the fact that the actions expressed by the somatic idioms are typical not only to some certain society but to the human being in general, while the differences are explained by the national way of thinking, the mentality, the national character, the ancient customs, the popular belief and the way of living of these people, etc. Thus, taking into consideration the comparative analysis of the article we come to the conclusion that first many idioms in the two languages are similar in their way of expression and in their idea, second in one language there may be a lot of idioms the ideas of which don't exist in the other language as the way of expression of these idioms is unknown to the linguistic thinking of the other language, third there are idioms the ideas of which are similar in both languages but the way of expression is different, etc.